



ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Չ Ե Կ ՈՒ Յ Ց

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ԱՆՑԿԱՑՎԱԾ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
Հոկտեմբեր 2013թ.

Թողարկման պատասխանատուներ՝

ԼՂՀ վիճակագրության
պետական խորհրդի անդամ
Ս. Հարությունյան

ԼՂՀ ԱՎԾ աշխատակազմի
ԱԱԳՎՀ բաժնի պետ
Գ. Գաբրիելյան

ԼՂՀ ԱՎԾ աշխատակազմի
ՀՍ բաժնի պետ
Ի. Մելքումյան

Հեռախոս՝ 94-40-19

Էլեկտրոնային փոստ՝ artsakhstat@karabakh.net

Ինտերնետի էջ www.stat-nkr.am

Թուղթ օֆսեթ 1: Չափսերը՝ 21x29,7: Տպաքանակը 30 օրինակ:

Հանձնված է տպագրության 2013թ. հոկտեմբերին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
2.	ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	5
3.	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	10
4.	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.....	10
5.	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ.....	11
5.1.	Զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածությունը.....	11
5.2.	Զբոսաշրջիկների սեռատարիքային բաշխվածությունը.....	14
5.3.	Զբոսաշրջիկների բաշխվածությունը ըստ ճանապարհորդության նպատակների.....	16
5.4.	Զբոսաշրջիկների նախընտրությունը ըստ կացարանի տեսակների.....	21
5.5.	Հարցմանը մասնակցած զբոսաշրջիկների ճանապարհորդության կազմակերպման ձևերն ու ծախսերը	25
5.6.	Զբոսաշրջիկների գնահատականը ԼՂՀ զբոսաշրջության միջավայրի վերաբերյալ	30
ՀԱՎԵԼՎԱԾ	Հետազոտության հարցաթերթերը և դրանց լրացման հրահանգը.....	34

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2013 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի համաձայն վարչական վիճակագրական համակարգի կատարելագործման միջոցով զբոսաշրջության իրական գնահատականի ներկայացման, զբոսաշրջության ոլորտի տվյալների բազայի ընդլայնման և ամբողջականացման նպատակով 2013թ. հուլիս-օգոստոս ամիսներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից անց է կացվել ընտրանքային հետազոտություն:

Հետազոտությամբ նախատեսվել է ստանալ տեղեկություններ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ժամանողների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից մեկնողների վերաբերյալ, մասնավորապես ժամանողների(մեկնողների) երկրների աշխարհագրության, տարիքային խմբերի, ճանապարհորդության հիմնական նպատակի, ճանապարհորդության ժամանակ կատարված ծախսերի չափերի և կառուցվածքի, ստացած ծառայությունների որակի և գների մատչելիության, Արցախի զբոսաշրջային գրավչության վերաբերյալ կարծիքների և այլնի մասին:

Հետազոտությամբ ընդգրկվել են հանրապետության զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմական, մշակութային, բնական գրավչության հիմնական օբյեկտներն ու հյուրանոցները՝ ընդգրկելով հանրապետության մայրաքաղաքը և բոլոր շրջանները: Ընդհանուր առմամբ հարցազրուցավարների կողմից լրացվել են 272 ժամանողների և 574 մեկնողների հարցաթերթ:

Հետազոտությունն իրականացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013թ հուլիսի 2-ի N16-Ա որոշմամբ հաստատված ժամանողի և մեկնողի հարցաթերթերի միջոցով (հավելված):

Ձեկույցը նախատեսված է սպառողների լայն շրջանակի համար, կարող է օգտակար լինել զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագրեր կազմողների, բնագավառում քաղաքականություն մշակողների, բնագավառում գործունեություն իրականացնող գործարարների, ինչպես նաև ոլորտում ուսումնասիրություններ իրականացնողների համար:

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությունը շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին(տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից լրացված հարցաթերթերի վրա է խարսխված սույն զեկույցը և ողջունում նրանց, ինչպես նաև զեկույցի բոլոր օգտագործողների արձագանքներն ու առաջարկությունները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն

Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է	-
չնշին մեծություն	0.0
ցուցանիշը չի հաշվարկվում	X
Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:	

2. ՋԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում զբոսաշրջային գործունեությունը կարգավորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով:

Զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմնական **սկզբունքներն են՝**

- 1) ճանաչել զբոսաշրջությունը՝ որպես տնտեսության գերակա ճյուղ,
- 2) աջակցել զբոսաշրջային գործունեությանը և դրա առաջնային ուղղությունների զարգացման համար ստեղծել բարենպաստ իրավական, տնտեսական և կառուցվածքային պայմաններ,
- 3) սահմանել զբոսաշրջության զարգացման գերակա ուղղությունները,
- 4) իրականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ երկրի նկարագրի ձևավորումը,
- 5) ստեղծել պայմաններ զբոսաշրջիկների, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների օրինական շահերի և իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար,
- 6) իրականացնել զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման ապահովումը,
- 7) աջակցել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից օրենքով սահմանված կարգով ստեղծված հասարակական միավորումներին:

Զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմնական **նպատակներն են՝**

- քաղաքացիների զբոսաշրջության ընթացքում ծագած իրավունքների ապահովումը,
- զբոսաշրջային այնպիսի համակարգի ստեղծումը, որը բավարարում է ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների պահանջմունքները, նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, պետության և նրա քաղաքացիների եկամուտների ավելացմանը, միջազգային կապերի զարգացմանը, զբոսաշրջային գրավչություն ունեցող ռեսուրսների և շրջակա միջավայրի պահպանմանը, պատմամշակութային ժառանգության և բնության ռացիոնալ օգտագործմանը,

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առաջնային զարգացման ենթակա բնական, սոցիալ-մշակութային և առողջարանային ռեսուրսներով հարուստ զբոսաշրջային տարածաշրջանների և (կամ) կենտրոնների զարգացման ապահովումը:

Զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության գերակա ուղղություններ են ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացումն ու աջակցումը:

Զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականությունն իրականացվում է՝

- 1) զբոսաշրջիկների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, ինչպես նաև նրանց անվտանգությունն ապահովելու միջոցառումների իրականացման,
- 2) զբոսաշրջային համակարգում լիցենզավորման, որակի համակարգի ներդրման, ստանդարտացման,
- 3) զբոսաշրջության նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն մուտքի և ելքի կանոնների սահմանման,
- 4) ձևավորված զբոսաշրջային արդյունքը ներքին և արտաքին զբոսաշրջային շուկաներում ներկայացնելու գործին աջակցման,
- 5) զբոսաշրջության բնագավառում պետական նպատակային ծրագրերի մշակման և իրականացման նպատակով ֆինանսավորման,

6) զբոսաշրջային համակարգում ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման,

7) զբոսաշրջային համակարգի կադրային ապահովման,

8) հարկային քաղաքականության,

9) զբոսաշրջային համակարգի գիտական հետազոտությունների զարգացման,

10) միջազգային զբոսաշրջային միջոցառումներին հայրենական զբոսաշրջային համակարգի տնտեսավարող սուբյեկտների և զբոսաշրջիկների մասնակցության աջակցման և համապատասխան ներկայացուցչական ենթակառուցվածքների ձևավորման,

11) միջազգային զբոսաշրջության և դրան հարակից ոլորտների վերաբերյալ տեղեկատվության ստացման ու հրապարակման, ինչպես նաև խորհրդատվության տրամադրման և այլ միջոցներով:

Ոլորտում կիրառվող հիմնական հասկացությունները ներկայացվում են ստորև.

զբոսաշրջություն՝ ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականներին այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից(երկրից) այլ վայր(երկիր) առավելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեություն.

այցելու՝ իր մշտական բնակության վայրից(երկրից) այլ վայր(երկիր) առավելագույնը մինչև մեկ տարի ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացի, որի ճանապարհորդության հիմնական նպատակը ժամանման վայրում(երկրում) վճարովի աշխատանքային գործունեությունը չէ, և որը ժամանման վայրում(երկրում) չի վարձատրվում իր հիմնական աշխատանքային գործունեության դիմաց.

զբոսաշրջիկ՝ այցելու, որը ճանապարհորդություն իրականացնելիս ժամանման վայրում(երկրում) անցկացնում է առնվազն մեկ գիշերակաց.

ներքին զբոսաշրջություն՝ որևէ երկրում բնակվող քաղաքացիների ճանապարհորդությունն իրենց երկրի սահմաններում.

արտագնա զբոսաշրջություն՝ որևէ երկրում բնակվող քաղաքացիների ճանապարհորդությունը մեկ այլ երկիր.

ներգնա զբոսաշրջություն՝ քաղաքացիների ճանապարհորդությունը որևէ երկիր, որը նրանց բնակության վայրը չէ.

զբոսաշրջային գործունեություն՝ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից զբոսաշրջային ծառայություններ մատուցելու գործունեություն.

զբոսաշրջային ծառայություններ՝ զբոսաշրջիկներին մատուցվող և նրանց պահանջմունքների բավարարմանն ուղղված տեղաբաշխման, հյուրանոցային, տեղափոխման, էքսկուրսային, սննդի կազմակերպման և մատուցման, մշակութային, մարզական բնույթի միջոցառումների, հանգստի, զվարճանքի կազմակերպման և այլ ծառայություններ.

զբոսաշրջային փաթեթ՝ զբոսաշրջային ծառայությունների համալիր, որն ընդգրկում է ծառայությունների մատուցման առնվազն երկու գործառույթ՝ կապված տրանսպորտային (և դրա հետ առնչվող), հյուրանոցային (և դրա հետ առնչվող) ծառայությունների հետ, ինչպես նաև այն ծառայությունների հետ, որոնք կապված չեն տրանսպորտային և հյուրանոցային ծառայությունների հետ և զբոսաշրջային արդյունքի էական մասն են կազմում: Ջբոսաշրջային փաթեթով մատուցված ծառայության տևողությունը պետք է գերազանցի 24 ժամը կամ ներառի առնվազն մեկ գիշերակաց.

զբոսավար՝ զբոսաշրջիկներին զբոսաշրջային ծառայությունների մատուցման մասին պայմանագրի սահմաններում էքսկուրսային տեղեկատվական, կազմակերպչական ծառայություն և մասնագիտական օգնություն մատուցող անձ.

ուղեկցորդ՝ զբոսաշրջիկներին զբոսաշրջային ծառայությունների մատուցման մասին պայմանագրի սահմաններում կազմակերպչական ծառայություն և մասնագիտական

օգնություն մատուցող անձ.

զբոսաշրջային տարածաշրջան (կամ) կենտրոն՝ առաջնահերթ զարգացման ենթակա բնական, սոցիալ-մշակութային և առողջարանային ռեսուրսների կենտրոնացմամբ զբոսաշրջության համար կարևոր նշանակություն ունեցող տարածք, որի սահմանները և կարգավիճակը որոշում ու հայտարարում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը.

զբոսաշրջային ռեսուրսներ՝ զբոսաշրջիկների մտավոր, նյութական, ֆիզիկական և այլ պահանջմունքների բավարարմանն ուղղված պատմամշակութային, կրոնական բնույթի, բնական, մարդկային, սոցիալ-տնտեսական և այլ ռեսուրսներ.

զբոսաշրջային օբյեկտ՝ զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմական, մշակութային, բնական գրավչության օբյեկտ.

զբոսաշրջային երթուղի՝ զբոսաշրջային ծառայությունների համալիրով (ամրագրում, տեղավորում, կերակրում, հանգստի կազմակերպում, տրանսպորտ, էքսկուրսիա և այլն) ապահովված, որոշակի երթուղով և կոնկրետ ժամկետներով զբոսաշրջային ճանապարհորդություն (ուղևորություն):

Համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ԼՂՀ օրենքի 41-րդ հոդվածի՝ հուշարձանները զբոսաշրջության նպատակով օգտագործելու դեպքում զբոսաշրջիկային կազմակերպությունները պետք է համապատասխան պայմանագիր կնքեն սեփականատերերի հետ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006թ. մարտի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զբոսաշրջության զարգացման 2006թ. պետական ծրագիրը հաստատելու մասին» N72 որոշմամբ հստակեցվել են զբոսաշրջության ոլորտում առկա հիմնախնդիրներն, ծրագրային միջոցառումների համակարգը և ակնկալվող արդյունքները: Մասնավորապես առաջնահերթ լուծման կարիք ունեցողները վերոնշյալ որոշման համաձայն հանգել են հետևյալին.

-զբոսաշրջության քանակական և որակական ազդեցության գնահատումը հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից.

-երկրի զարգացման համատեքստում վարչական վիճակագրական համակարգի կատարելագործման միջոցով զբոսաշրջության իրական գնահատականի ներկայացումը.

-հայրենական զբոսաշրջային արդյունքի պատշաճ մարքեթինգային քաղաքականության իրականացումը:

ԼՂՀ այցելուների քանակը տարիների ընթացքում անընդհատ աճում են և 2012թ. կազմել են 15559 զբոսաշրջիկ: Զբոսաշրջության զարգացման 2006թ. ծրագրի նպատակն էր ԼՂՀ-ում զբոսաշրջության ոլորտի զարգացումը զբոսաշրջային ծառայությունների որակի բարձրացման, ժամանակակից արդյունավետ ու սրբունակ զբոսաշրջային արդյունքի ձևավորման և միջազգային զբոսաշրջային շուկա արտահանման միջոցով:

Ծրագրի իրականացման տարում որպես հիմնական նպատակ նախատեսվում է ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ներգնա զբոսաշրջիկների այցելության շուրջ 10-15տոկոս աճ 2005թ. համեմատ՝ արդյունքում 2006թ. ապահովելով շուրջ 4600 զբոսաշրջային այցելություններ:

2006թ համար նախատեսված ծրագրային միջոցառումների համակարգն ընդգրկում է զբոսաշրջության ոլորտի զարգացման հետևյալ հիմնական ուղղությունները՝

-զբոսաշրջության ոլորտի իրավական դաշտի կատարելագործում՝ ուղղված ոլորտում կազմակերպչական և տնտեսական գործունեության համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը.

-զբոսաշրջային ոլորտի տեղեկատվագրավագրային ապահովման համակարգի ստեղծում

և զարգացում.

-զբոսաշրջության ոլորտում ցուցահանդեսներին մասնակցության ապահովում և միջազգային համագործակցության կապերի ստեղծում.

-Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ զբոսաշրջային ոլորտին ուղղված ինտերնետային էջի ստեղծում.

-ԼՂՀ-ի մասին համառոտ տեղեկատվական ուղեցույցի մշակում և տպագրում.

-զբոսավարի և ուղեկցորդի որակավորումը ստուգելու համար համակարգչային ծրագրի ներդրում:

2013թ. փետրվարի 26-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը հաստատել է 2013թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զբոսաշրջության զարգացման ծրագիրն ու դրա իրականացման միջոցառումների ցանկը, որի մշակման համար հիմք են հանդիսացել՝

- «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության» մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը,

- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը,

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1-Ն որոշումը:

Ծրագրի հիմնական **նպատակներն են՝**

-զբոսաշրջության կայուն զարգացման ապահովման միջոցով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայուն տնտեսական զարգացումը,

-ակտիվ և արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացման միջոցով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ձևավորումը և միջազգային շուկայում ներկայացումն ու ամրապնդումը,

-նոր աշխատատեղերի ստեղծումը, բնակչության եկամուտների ավելացումը,

-Հայաստանի Հանրապետության հետ ինտեգրացման խորացումը:

Այս ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է՝

-ապահովել 2013թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներգնա զբոսաշրջային այցելությունների նվազագույնը 30% աճ,

-հնարավորինս երկարացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն այցելող զբոսաշրջիկների գիշերակացի տևողությունը,

-ընդլայնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն այցելող զբոսաշրջիկների ծագման աշխարհագրությունը,

-շարունակել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային երթուղիներում ու փաթեթներում ընդգրկելու գործընթացը,

-սահմանել մրցունակ զբոսաշրջային տարածաշրջաններ, կենտրոններ և զբոսաշրջային երթուղիներ՝ դրանք ընդգրկելով ճյուղային և տարածքային զարգացման ծրագրում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զբոսաշրջության զարգացման նախորդ տարիներին իրականացված պետական ծրագրերի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2013թ. զբոսաշրջության զարգացման ծրագրի նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ հիմնական խնդիրների լուծմամբ՝

-զբոսաշրջության ենթակառուցվածքների ձևավորում և զարգացում, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների ստեղծման խթանում,

-զբոսաշրջության բնագավառում արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացում,

-վարչական վիճակագրական համակարգի կատարելագործում և հանրապետության տնտեսական զարգացման վրա զբոսաշրջության քանակական ու որակական ազդեցության իրական գնահատում,

-Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային շուկային Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինտեգրում, ակտիվ և արդյունավետ համագործակցական կապերի ստեղծում,

-սփյուռքի հայկական համայնքների հետ սերտ համագործակցությամբ և արտերկրների պահանջարկի շուկաներում (մասնավորապես սփյուռքահայերի շրջանակում) տեղեկատվական և քարոզչական աշխատանքների իրականացմամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զբոսաշրջային գործունեության սուբյեկտների համար գործունեության առավել նպաստավոր պայմանների ստեղծում:

Միջազգային զբոսաշրջությունը, հանդիսանալով համաշխարհային տնտեսության բարդ և համապարփակ բնագավառ, մեծ ազդեցություն ունի ինչպես համաշխարհային տնտեսության կառուցվածքի և ընդհանուր իրավիճակի, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների և տարածաշրջանների տնտեսությունների վրա: Ներկայումս զբոսաշրջությունը առաջատար տեղ է զբաղեցնում ապրանքների և ծառայությունների համաշխարհային արտահանման ծավալում: Ըստ կանխատեսումների՝ 2020թ-ին համաշխարհային եկամտունեղը զբոսաշրջությունից կկազմեն 1.5 տրլն.դոլար*: Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության կանխատեսումների՝ 2030 թվականին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների թիվը կհասնի 1.8 տրիլիոնի:

Չբոսաշրջությունը տնտեսության այն ոլորտներից է, որն աշխատանքով է ապահովում մոտ 250 մլն մարդու: Յուրաքանչյուր 12-րդ աշխատողն աշխարհում զբաղվում է զբոսաշրջության ոլորտում*:

2008թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործում է ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության վարչությունը, որը գործադիր իշխանության հանրապետական մարմին է և իրականացնում է զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության, թանգարանների և թանգարանային ֆոնդի, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության, ուսումնասիրման և օգտագործման բնագավառներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Չբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության բնագավառում ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության խնդիրները հանգում են հետևյալին՝

ա) զբոսաշրջության զարգացմանը, այն տնտեսության գերակա ճյուղ դառնալուն աջակցումը,

բ) զբոսաշրջային գործունեությանը աջակցումը և դրա առաջնային ուղղությունների զարգացման համար բարենպաստ իրավական, տնտեսական և կառուցվածքային պայմանների ստեղծումը,

գ) զբոսաշրջության զարգացման գերակա ուղղությունների սահմանումը,

դ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ երկրի նկարագրի ձևավորման իրականացումը,

ե) զբոսաշրջիկների, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների օրինական շահերի և իրավունքների պաշտպանությունը իրականացնելու համար պայմանների ստեղծումը,

զ) զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման ապահովման իրականացումը,

է) զբոսաշրջության գործունեության սուբյեկտների կողմից օրենքով սահմանված

* «Չբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» 2013թ. ծրագիր ՀՀ կառավարության որոշում 22 նոյեմբեր 2012թ. N 1478-Ն:

կարգով ստեղծված հասարակական միավորումներին աջակցումը:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Սույն հետազոտության հիմնական նպատակն է զբոսաշրջության իրական գնահատականի ձևավորման համար տեղեկատվության ստացումը, զբոսաշրջության ոլորտի տվյալների բազայի ընդլայնումն ու ամբողջականացումը, ինչպես նաև ոլորտի զարգացումն պայմանավորող հիմնական գործոնների բացահայտումն ու վերլուծությունը:

Հետազոտության նպատակներն ընդհանուր առմամբ կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

- համարել ԼՂՀ վճարային հաշվեկշռի, մասնավորապես միջազգային զբոսաշրջության վերաբերյալ տվյալների բազան և ձևավորել նախադրյալներ դրա պարբերական արդիականացման համար,
- արդիականացնել միջազգային զբոսաշրջության վերաբերյալ տեղեկությունները և ձևավորել մեխանիզմներ դրա պարբերական իրացման համար,
- ուսումնասիրելով զբոսաշրջության նպատակայնությունը, տևողությունը, ծախսերի չափը և այլն՝ կատարել համապատասխան դասակարգումներ,
- ապահովել ոլորտի վերաբերյալ վիճակագրությունում միջազգային մեթոդաբանության կիրառումը,
- ձևավորել նախադրյալներ պետական վիճակագրությունում ընտրանքային դիտարկման մեխանիզմների կիրարկումն ընդլայնելու համար,
- ներկայացնել զբոսաշրջության բնագավառում առկա հիմնահարցերը,
- բացահայտել զբոսաշրջության ոլորտի զարգացումն խոչընդոտող առաջնահերթ խնդիրները:

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հետազոտության իրականացման համար ձևավորվել է աշխատակազմ՝ հարցազրուցավարներ, որակի հսկիչներ (ստուգողներ) և կողավորողներ: Հետազոտությանը նախորդող ժամանակահատվածում իրականացվել է հարցազրուցավարների հրահանգավորում՝ ընտրանքի և հարցաթերթի լրացման կարգի վերաբերյալ, նրանց են հանձնվել դիտարկման համար անհրաժեշտ հարցաթերթերը, լրացման հրահանգները:

Հրահանգավորման ընթացքում հարցազրուցավարներին պարզաբանումներ են տրվել հարցաթերթում ներառված ցուցանիշների լրացման վերաբերյալ: Մանրամասն պարզաբանումներ են տրվել նաև հետազոտությանը մասնակցելուց հրաժարման դեպքերում հարցաթերթերի լրացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Տվյալների հավաքագրումն իրականացվել է ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ որոշ դեպքերում հնարավոր է նաև հարցաթերթ չլրացվելու դեպքեր՝ զբոսաշրջիկների հարցումից հրաժարվելու պատճառով, նախատեսվել է նաև պահուստային ընտրանք՝ հետազոտության արդյունքների բավարար ներկայացուցչականությունն ապահովելու նպատակով:

Անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման աշխատանքների ողջ գործընթացն իրականացվել է ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակիցների

(հարցազրուցավարների) կողմից, հարցումների միջոցով:

Ստացվող տեղեկատվության հնարավոր բարձր որակ ապահովելու նպատակով ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվել են նաև մի շարք միջոցառումներ հետազոտության անհրաժեշտության և դրա նպատակների պարզաբանման, հարցաթերթերի լրացման առումով ակտիվության բարձրացման նպատակով:

Դաշտային աշխատանքները իրականացվել է 2013թ. հուլիս և օգոստոս ամիսներին:

Հարցազրուցավարների կողմից լրացված հարցաթերթերը թվաքանակային և տրամաբանական ստուգման ենթարկելուց հետո մշակվել են հետազոտության արդյունքների ամփոփման նպատակով կազմված ծրագրով:

5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Զբոսաշրջության ոլորտում անցկացված ընտրանքային հետազոտությանը մասնակցել են ԼՂՀ այցելած 574(մեկնող) և ԼՂՀ-ից մեկնած 272(ժամանող) զբոսաշրջիկ:

Հարցմանը մասնակցած 574 մեկնողներից ոչ մեկը միջազգային կազմակերպությունների և զինվորական ստորաբաժանումների աշխատակիցներ չեն հանդիսացել, դրանք ըստ միջազգային մեթոդաբանության, չեն համարվում զբոսաշրջիկներ և նրանց հետ հարցազրույցը չի շարունակվում: Միևնույն ժամանակ, և ժամանողների, և մեկնողների շրջանում չեն արձանագրվել այնպիսի դեպքեր, երբ այցելուն հանրապետությունում 24 ժամից պակաս կամ էլ մեկ տարուց ավելի մնար:

5.1 Զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածությունը

Հետազոտության օրերին հանրապետությունից մեկնել են աշխարհի 25 երկրներից ԼՂՀ այցելած հետազոտությամբ ընդգրկված 574 զբոսաշրջիկներ: Ընդ որում *մեկնողների* 83.1 տոկոսն ունեն հայկական ծագում:


Աղյուսակ 1. Հարցմանը մասնակցած մեկնողներն ըստ քաղաքացիության երկրի

Երկրները	Մեկնողների թվաքանակը, ընդամենը մարդ	որից հայկական ծագում ունեցողներ	Մեկնողների տեսակարար կշիռը, %	որից՝ հայկական ծագում ունեցողների տեսակարար կշիռը, %	
				ընդամենի նկատմամբ	համապատասխան երկրի մեկնողների ընդամենի նկատմամբ
Ընդամենը	574	477	100.0	100.0	83.1
այդ թվում՝					
Հայաստան	236	223	41.1	46.8	94.5
Ռուսաստան	217	186	37.8	39.0	85.7
Վրաստան	18	15	3.1	3.1	83.3
Ուկրաինա	9	6	1.6	1.3	66.7
Թուրքմենիա	4	2	0.7	0.4	50.0
Ուզբեկստան	1	1	0.2	0.2	100.0
Լեհաստան	2	1	0.4	0.2	50.0
Չեխիա	3	1	0.5	0.2	33.3
Բուլղարիա	2	-	0.4	0.0	-
Իսպանիա	1	-	0.2	0.0	-
Բելգիա	1	1	0.2	0.2	100.0
Շվեդիա	2	2	0.3	0.4	100.0
Շվեյցարիա	2	1	0.3	0.2	50.0
Կանադա	1	1	0.2	0.2	100.0
ԱՄՆ	19	13	3.3	2.7	68.4
Ֆրանսիա	31	9	5.4	2.0	29.0
Թուրքիա	8	7	1.4	1.5	87.5
Գերմանիա	1	1	0.2	0.2	100.0

Երկրները	Մեկնողների թվաքանակը, ընդամենը մարդ	որից հայկական ծագում ունեցողներ	Մեկնողների տեսակարար կշիռը, %	որից՝ հայկական ծագում ունեցողների տեսակարար կշիռը, %	
				ընդամենի նկատմամբ	համապատասխան երկրի մեկնողների ընդամենի նկատմամբ
Անգլիա	3	1	0.5	0.2	33.3
Իտալիա	2	1	0.3	0.2	50.0
Լիբանան	1	1	0.2	0.2	100.0
Լիտվա	2	2	0.3	0.4	100.0
Չինաստան	5	-	0.9	0.0	-
Ավստրալիա	2	1	0.3	0.2	50.0
Եգիպտոս	1	1	0.2	0.2	100.0

Աղյուսակից ակնհայտ է, որ հարցմանը մասնակցած մեկնողների 41.1 տոկոսն ունեն ՏՏ, 37.8 տոկոսը՝ ՌԴ, 5.4 տոկոսը՝ Ֆրանսիայի, 3.3 տոկոսը՝ ԱՄՆ-ի քաղաքացիություն:

Գծապատկեր 1. Հարցմանը մասնակցած մեկնողների բաշխվածությունն ըստ քաղաքացիության երկրի, %



Հարցման ժամանակ պարզվեց, որ մեկնողների 31.9 տոկոսը կամ 183 զբոսաշրջիկ նախկինում ընդհանրապես չեն այցելել Լեռնային Ղարաբաղ: Նախկինում Լեռնային Ղարաբաղ չայցելածների 31.7 տոկոսը բաժին է ընկնում ՀՀ-ի, 34.4 տոկոսը՝ Ռուսաստանի, 11.5 տոկոսը՝ Ֆրանսիայի, 5.5 տոկոսը՝ Վրաստանի, 3.3 տոկոսը՝ ԱՄՆ-ի, 2.7 տոկոսը՝ Չինաստանի, 2.2 տոկոսը՝ Թուրքիայի, 1.6 տոկոսը՝ Ուկրաինայի, 1.1-ական տոկոսը՝ Ավստրալիայի, Չեխիայի և Անգլիայի քաղաքացիներին:


Աղյուսակ 2. Հարցմանը մասնակցած մեկնողների բաշխվածությունն ըստ ԼՂՀ այցելության քանակի և երկրների, %

Երկրները	Նախկինում Լեռնային Ղարաբաղ չայցելածներ	Նախկինում Լեռնային Ղարաբաղ այցելածներ, որից	մեկ այցելություն	երկու այցելություն	երեք և ավելի այցելություն
Ընդամենը	100.0	100.0	16.1	18.9	65.0
այդ թվում՝					
Հայաստան	31.7	100.0	18.5	22.5	59.0
Ռուսաստան	34.4	100.0	9.7	16.3	74.0
Վրաստան	5.5	100.0	25.0	-	75.0
Ուկրաինա	1.6	100.0	33.3	16.7	50.0
Թուրքմենիա	0.6	100.0	-	33.3	66.7
Ուզբեկստան	-	100.0	-	100.0	-
ԱՄՆ	3.3	100.0	30.8	23.1	46.1
Կանադա	0.6	100.0	-	-	-
Ֆրանսիա	11.5	100.0	30.0	20.0	50.0
Գերմանիա	-	100.0	-	-	100.0
Ավստրալիա	1.1	100.0	-	-	-
Անգլիա	1.1	100.0	-	-	100.0
Իտալիա	0.6	100.0	-	-	100.0
Իսպանիա	0.5	100.0	-	-	-
Լիբանան	-	100.0	-	100.0	-
Լիտվա	0.5	100.0	100.0	-	-
Չեխիա	1.1	100.0	-	-	100.0

Երկրները	Նախկինում Լեռնային Ղարաբաղ չայցելածներ	Նախկինում Լեռնային Ղարաբաղ այցելածներ, որից	մեկ այցելություն	երկու այցելություն	երեք և ավելի այցելություն
Թուրքիա	2.2	100.0	50.0	-	50.0
Եգիպտոս	0.5	100.0	-	-	-
Չինաստան	2.7	100.0	-	-	-
Շվեդիա	-	100.0	-	-	100.0
Շվեյցարիա	-	100.0	-	-	100.0
Լեհաստան	0.5	100.0	-	-	100.0
Բուլղարիա	-	100.0	50.0	-	50.0

Հարցման մասնակիցների մեծամասնությունը՝ 68.1 տոկոսը կամ 391 զբոսաշրջիկ, նախկինում այցելել են Ղարաբաղ, ընդ որում՝ դրանց գերակշիռ մասը՝ 65.0 տոկոսը այցելել են երեք և ավելի անգամ, 18.9 տոկոսը՝ երկու անգամ, իսկ 16.1 տոկոսը՝ ընդամենը մեկ անգամ:

Գծապատկեր 2. Մեկնողների կառուցվածքն ըստ այցելությունների քանակի, %




Ինչ վերաբերում է *Ժամանողներին*, ապա հետազոտված զբոսաշրջիկները հանրապետությունից մեկնել են աշխարհի 15 երկրներ ու ամենաշատը այցելել են Հայաստանի Հանրապետություն (ընդամենի 51.5 տոկոսը), Ռուսաստանի Դաշնություն (29.8 տոկոսը), Վրաստան (9.5 տոկոսը) և Ուկրաինա (2.2 տոկոսը):

Աղյուսակ 3. Հարցմանը մասնակցած ժամանողների աշխարհագրական բաշխվածությունը

Երկրները	Ժամանողների թվաքանակը, մարդ	Տեսակարար կշիռը, %
Ընդամենը	272	100.0
այդ թվում՝		
Հայաստան	140	51.5
Ռուսաստան	81	29.8
Վրաստան	26	9.5
Ուկրաինա	6	2.2
Բուլղարիա	5	1.8
Թուրքմենիա	2	0.7
Թուրքիա	2	0.7
Բելգիա	2	0.7
ԱՄՆ	2	0.7
Ֆրանսիա	1	0.4
Լատվիա	1	0.4
Լիտվա	1	0.4
ՄԱԷ	1	0.4
Իսրայել	1	0.4
Անգլիա	1	0.4

Ժամանողներից 6 երկիր այցելել են մեկական, իսկ 4 երկիր՝ երկուական զբոսաշրջիկ: Բուլղարիա այցելել են 5, իսկ Ուկրաինա՝ 6 զբոսաշրջիկ:

Գծապատկեր 3. Հարցմանը մասնակցած ժամանողների աշխարհագրական քաղխվածությունը, %



5.2. Ջրուսաշրջիկների սնտատարիքային քաղխվածությունը


Հարցմանը մասնակցած 574 մեկնողներից 310-ը կամ 54.0 տոկոսը կազմել են տղամարդիկ, իսկ 264-ը կամ 46.0 տոկոսը՝ կանայք: Ընդ որում՝ մինչև 17 տարեկանների կառուցվածքում զբոսաշրջիկների 53.8 տոկոսը կազմել են տղամարդիկ, իսկ 46.2 տոկոսը՝ կանայք, 18-35 տարեկանների կառուցվածքում՝ համապատասխանաբար 51.8 տոկոս և 48.2 տոկոս, 36-55 տարեկանների կառուցվածքում՝ 58.7 տոկոս և 41.3 տոկոս, իսկ 56 տարեկան և բարձր տարիքի անձինք՝ 50.7 տոկոս և 49.3 տոկոս:

Աղյուսակ 4. Հարցմանը մասնակցած մեկնողների սնտատարիքային կազմը

Տարիքը	Մեկնողների թվաքանակը, մարդ		
	Ընդամենը	որից՝	
		Տղամարդ	Կին
մինչև 17 տարեկան	13	7	6
18-35 տարեկան	299	155	144
36-55 տարեկան	189	111	78
56 և ավելի	73	37	36
Ընդամենը	574	310	264
Միջին տարիքը, տարի	37	38	37

Եվ տղամարդկանց, և կանանց շրջանում ամենաշատ զբոսաշրջիկներ բաժին են ընկել 18-35 և 36-55 տարիքային խմբերին: Ընդ որում՝ մեկնողների միջին տարիքը կազմել է 37 տարեկան:

Գծապատկեր 4. Մեկնողների քաղխումը ըստ առանձին տարիքային խմբերի, %



Ըստ աշխարհագրական քաղխվածության՝ բոլոր տարիքային խմբերում գերակշռում են Հայաստանի Հանրապետություն և Ռուսաստանի Դաշնություն մեկնող զբոսաշրջիկները: Մինչև 17 տարեկանների 30.8 տոկոսը, 18-35 տարեկանների՝ 46.8

տոկոսը, 36-55 տարեկանների՝ 36.5 տոկոսը, 56 տարեկան և բարձր տարիքային խմբի ներկայացուցիչների՝ 31.5 տոկոսը կազմել են ՀՀ, իսկ համապատասխանաբար՝ 53.8 տոկոսը, 31.4 տոկոսը, 48.1 տոկոսը և 34.2 տոկոսը՝ ՌԴ մեկնողները:

Բացի դրանից, մինչև 17 տարեկան տարիքային խմբում համեմատաբար բարձր կշիռ կազմել են Թուրքիա՝ 15.4 տոկոս, մեկնողները, իսկ 56 տարեկան և բարձր տարիքային խմբում՝ Ֆրանսիա՝ 9.6 տոկոս, ԱՄՆ՝ 5.5 տոկոս, Թուրքիա, Լիտվա և Վրաստան՝ 2.7-ական տոկոս, մեկնողները:

Աղյուսակ 5. Մեկնողներն ըստ երկրների և տարիքային խմբերի, %

Երկրները	մինչև 17 տարեկան	18-35 տարեկան	36-55 տարեկան	56 և ավելի	Ընդամենը
Ընդամենը	2.3	52.1	32.9	12.7	100.0
այդ թվում՝					
Հայաստան	1.7	59.3	29.2	9.8	100.0
Ռուսաստան	3.2	43.3	41.9	11.6	100.0
Վրաստան	0.0	66.7	22.2	11.1	100.0
Ուկրաինա	0.0	66.7	22.2	11.1	100.0
Թուրքիա	25.0	37.5	12.5	25.0	100.0
Ուզբեկստան	0.0	100.0	0.0	0.0	100.0
Բելգիա	0.0	100.0	0.0	0.0	100.0
Բուլղարիա	0.0	0.0	50.0	50.0	100.0
Շվեդիա	0.0	50.0	50.0	0.0	100.0
ԱՄՆ	0.0	42.1	36.8	21.1	100.0
Ֆրանսիա	0.0	61.3	16.1	22.6	100.0
Գերմանիա	0.0	100.0	0.0	0.0	100.0
Անգլիա	0.0	66.7	33.3	0.0	100.0
Չեխիա	0.0	100.0	0.0	0.0	100.0
Չինաստան	0.0	100.0	0.0	0.0	100.0
Իտալիա	0.0	0.0	50.0	50.0	100.0
Իսպանիա	0.0	100.0	0.0	0.0	100.0
Լիտվա	0.0	0.0	0.0	100.0	100.0
Լեհաստան	0.0	50.0	50.0	0.0	100.0
Եգիպտոս	0.0	0.0	0.0	100.0	100.0
Այլ երկրներ	0.0	40.0	33.3	26.7	100.0

Հարցմանը մասնակցած 272 ժամանողներից 52.9 տոկոսը կազմել են տղամարդիկ, իսկ 47.1 տոկոսը՝ կանայք: Ընդ որում՝ տղամարդիկ գերակշռում են բոլոր տարիքային խմբերում, բացի մինչև 17 տարեկան տարիքային խմբից: Մինչև 17 տարեկան տարիքային խմբում տղամարդիկ կազմել են 44.4 տոկոս, իսկ կանայք՝ 55.6 տոկոս, 18-35 տարեկան տարիքային խմբում՝ համապատասխանաբար 50.4 տոկոս և 49.6 տոկոս, 36-55 տարիքային խմբում՝ 58.1 տոկոս և 41.9 տոկոս, իսկ 56 տարեկան և բարձր տարիքային խմբում կանայք կազմել են ընդամենի 52.0 տոկոսը, իսկ տղամարդիկ՝ 48.0 տոկոսը:


Աղյուսակ 6. Հարցմանը մասնակցած ժամանողների սեռատարիքային կառուցվածքը

Տարիքը	Ժամանողների թվաքանակը, մարդ			Տեսակարար կշիռը, %		
	ընդամենը	որից՝		ընդամենը	որից՝	
		տղամարդ	կին		տղամարդ	կին
մինչև 17 տարեկան	9	4	5	3.3	2.8	3.9
18-35 տարեկան	127	64	63	46.7	44.4	49.2
36-55 տարեկան	86	50	36	31.6	34.7	28.1
56 և ավելի	50	26	24	18.4	18.1	18.8
Ընդամենը	272	144	128	100.0	100.0	100.0
Միջին տարիքը, տարի	39	40	38	-	-	-

Ժամանողների միջին տարիքը կազմել է 39 տարեկան, ընդ որում տղամարդկանցը՝ 40 տարեկան, իսկ կանանցը՝ 38 տարեկան: Հետազոտության ժամանակ պարզվեց նաև, որ, ինչպես և մեկնողների կառուցվածքում, ժամանողների կառուցվածքում ևս մեծ մասը բաժին

է ընկնում 18-35 և 36-55 տարեկան տարիքային խմբերին:

Գծապատկեր 5. Ժամանողների բաշխումը ըստ առանձին տարիքային խմբերի,%



Հարցմամբ պարզվել է նաև, որ բոլոր տարիքային խմբերի զբոսաշրջիկները ավելի հաճախ այցելել են Հայաստան և Ռուսաստան, ընդ որում մինչև 17 տարեկան տարիքային խմբում այն կազմել է համապատասխանաբար 87.5 և 12.5 տոկոս, 18-35 տարեկան տարիքային խմբում՝ 52.3 և 28.1 տոկոս, 36-55 տարեկան տարիքային խմբում՝ 53.5 և 27.9 տոկոս, 56 տարեկան և բարձր տարիքային խմբում՝ 40.0-ական տոկոս: Բացի դրանից, 18-35 տարեկան տարիքային խմբում ժամանողների 13.3 տոկոսն այցելել են Վրաստան, 1.6-ական տոկոսը՝ Բուլղարիա, ԱՄՆ, Ուկրաինա, 0.8 տոկոսը՝ Բելգիա և 0.7 տոկոսը՝ Միացյալ Արաբական Էմիրություններ, 36-55 տարեկան տարիքային խմբում 8.1 տոկոսը՝ Վրաստան, 2.3-ական տոկոսը՝ Բուլղարիա, Թուրքիա, Ուկրաինա, 56 տարեկան և բարձր տարիքային խմբում 4.0-ական տոկոսը՝ Վրաստան, Ուկրաինա և Թուրքմենիա:

Աղյուսակ 7. Ժամանողների աշխարհագրական կառուցվածքն ըստ տարիքային խմբերի,%

Երկրները	մինչև 17 տարեկան	18-35 տարեկան	36-55 տարեկան	56 և ավելի	Ընդամենը
Ընդամենը	2.9	47.1	31.6	18.4	100.0
այդ թվում՝					
Հայաստան	5.0	47.9	32.9	14.2	100.0
Ռուսաստան	1.2	44.4	29.7	24.7	100.0
Վրաստան	0.0	65.4	26.9	7.7	100.0
Ուկրաինա	0.0	33.3	33.3	33.3	100.0
Թուրքմենիա	0.0	0.0	0.0	100.0	100.0
Բելգիա	0.0	50.0	0.0	50.0	100.0
Թուրքիա	0.0	0.0	100.0	0.0	100.0
ԱՄՆ	0.0	100.0	0.0	0.0	100.0
Ֆրանսիա	0.0	0.0	0.0	100.0	100.0
Բուլղարիա	0.0	40.0	40.0	20.0	100.0
ՄԱԷ	0.0	100.0	0.0	0.0	100.0
Անգլիա	0.0	0.0	100.0	0.0	100.0
Իսրայել	0.0	0.0	100.0	0.0	100.0
Լատվիա	0.0	0.0	0.0	100.0	100.0
Լիտվա	0.0	0.0	100.0	0.0	100.0

5.3. Զբոսաշրջիկների բաշխվածությունը ըստ ճանապարհորդության նպատակների


Հետազոտության արդյունքներով զբոսաշրջիկների 48.8 տոկոսը ԼՂՀ են ժամանել հանգստի և ժամանցի, 41.6 տոկոսը՝ հարազատներին և ընկերներին այցելելու, 5.6 տոկոսը՝ գործնական նպատակներով:

Աղյուսակ 8. Հարցմանը մասնակցած մեկնողների բաշխվածությունը ըստ նպատակի

Նպատակը	Մեկնողների թվաքանակը, մարդ	Տեսակարար կշիռը, %
Գործնական	32	5.6
Կրթության	2	0.4
Բուժման	-	-
Հանգստի և ժամանցի	280	48.8
Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության	3	0.5
Այցելություն հարազատներին, ընկերներին	239	41.6
Այլ	18	3.1
Ընդամենը	574	100.0


Ընդ որում՝ 18-35 տարեկանների 6.4 տոկոսը (տղամարդկանց 7.7 տոկոսը և կանանց 4.9 տոկոսը) ժամանել են Ղարաբաղ գործնական, 55.9 տոկոսը (տղամարդկանց 62.6 տոկոսը և կանանց 48.6 տոկոսը)՝ հանգստի և ժամանցի, 32.1 տոկոսը (տղամարդկանց 22.6 տոկոսը և կանանց 42.4 տոկոսը)՝ հարազատներին և ընկերներին այցելության նպատակներով, 36-55 տարիքային խմբի ներկայացուցիչների 4.8 տոկոսը (տղամարդկանց 4.5 տոկոսը և կանանց 5.1 տոկոսը) ժամանել են գործնական, 42.9 տոկոսը (տղամարդկանց 43.2 տոկոսը և կանանց 42.3 տոկոսը) հանգստի և ժամանցի, 50.3 տոկոսը (տղամարդկանց 50.5 տոկոսը և կանանց 50.0 տոկոսը) հարազատներին և ընկերներին այցելության նպատակներով:

Գծապատկեր 6. Մեկնողների բաշխումը ըստ սեռի և նպատակների, %



ՀՀ-ից ԼՂՀ այցելածների 57.2 տոկոսը հանգստի և ժամանցի, իսկ 29.2 տոկոսը՝ հարազատներին և ընկերներին այցելության նպատակ են ունեցել: Հիմնականում նույն նպատակներով են Ղարաբաղ այցելել ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Չեխիայից և Վրաստանից (համապատասխանաբար 52.6 տոկոս և 36.8 տոկոս, 77.4 տոկոս և 16.1 տոկոս, 66.7 տոկոս և 33.3 տոկոս, 77.8 տոկոս և 22.2 տոկոս), իսկ Ռուսաստան և Ուկրաինա մեկնողների 55.7 տոկոսը և 66.7 տոկոսը հանրապետություն են ժամանել հարազատներին և ընկերներին այցելության, 37.3 տոկոսը և 33.3 տոկոսը՝ հանգստի և ժամանցի նպատակներով:

Գծապատկեր 7. Մեկնողների կառուցվածքն ըստ այցելության նպատակների՝ քաղաքացիության երկրներով, %



1. Գործնական 3. Բուժման 5. Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության
 2. Կրթության 4. Հանգստի և ժամանցի 6. Այցելություն հարազատներին, ընկերներին 7. Այլ

Ընդհանուր առմամբ, ինչպես նրևում է գծապատկերից մեկնողների մեծամասնությունը հիմնականում եկել են հարազատներին, ընկերներին այցելության և հանգստի ու ժամանցի նպատակներով: Իսկ ահա Իտալիայից և Լեհաստանից ժամանած զբոսաշրջիկների կշիռները հավասարաչափ են բաշխվել հարազատներին, ընկերներին այցելության և հանգստի ու ժամանցի նպատակների միջև: Չինաստանից ժամանած զբոսաշրջիկների 40.0 տոկոսը, Հայաստանից՝ 10.2 տոկոսը, Ռուսաստանից՝ 2.3 տոկոսը և Ֆրանսիայից՝ 3.2 տոկոսը այցելել են Ղարաբաղ գործնական նպատակով: ԱՄՆ-ից, Հայաստանից և Ռուսաստանից՝ համապատասխանաբար 5.3 տոկոսը, 0.4 տոկոսը և 0.5 տոկոսը այցելել են Ղարաբաղ մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության նպատակով:


Ղարաբաղն ընտրելու հիմնական պատճառի վերաբերյալ հարցադրմանը մեկնողների 28.8 տոկոսը նշել է «մշակույթ/պատմություն» պատասխանը, իսկ 60.8 տոկոսի Ղարաբաղ գալու հիմնական պատճառը հանդիսացել է բնությունը/տեսարժան վայրերը: «Այլ» պատասխանն ընտրածների մեծամասնությունը պատասխանել է, որ այցելել է Ղարաբաղ հարազատներին և ընկերներին տեսակցելու և իր հարազատ հանգրվանում հանգստանալու նպատակով:

Աղյուսակ 9. Հարցմանը մասնակցած մեկնողներն ըստ Ղարաբաղն ընտրելու հիմնական պատճառի

	Թվաքանակը, մարդ	Տեսակարար կշիռը, %	որից հայկական ծագում ունեցողներ	Տեսակարար կշիռը, %
Ընդամենը մեկնողներ	423	100.0	332	100.0
այդ թվում՝				
Բնությունը/տեսարժան վայրերը	257	60.8	207	62.4
Մշակույթ/պատմությունը	122	28.8	89	26.8
Ուխտագնացությունը	6	1.4	3	0.9
Մասնագիտական շրջագայությունը	10	2.4	9	2.7
Արվածային շրջագայությունը	5	1.2	2	0.6
Արցախի հիմնախնդիրը	4	0.9	3	0.9
Այլ	19	4.5	19	5.7


Հարցվածների միայն 2.4 տոկոսն է այցելել Ղարաբաղ մասնագիտական շրջագայության, 1.4 տոկոսը՝ ուխտագնացության նպատակով, իսկ 0.9 տոկոսին գրավել է Արցախի հիմնախնդիրը:

Գծապատկեր 8. Մեկնողների բաշխումն ըստ Ղարաբաղն ընտրելու հիմնական պատճառի, %



«Ղարաբաղն ընտրելու հարցում ի՞նչ տեղեկատվական աղբյուրներից եք օգտվել» հարցին գերակշիռ մեծամասնությունը՝ ավելի քան 65 տոկոսը, նշել է՝ ընկերներին, հարազատներին: Իսկ հետազոտության մասնակիցների 25.3 տոկոսը հաշվի է առել նախկին այցելությունները:

Գծապատկեր 9. Մեկնողների բաշխումն ըստ Ղարաբաղն ընտրելու հարցում տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հանգամանքի, %



Վերլուծելով *Ժամանողների* ճանապարհորդության հիմնական նպատակները՝ կարելի է ասել, որ այն համարյա նույնական է մեկնողների ճանապարհորդության հիմնական նպատակների հետ: Մասնավորապես՝ ժամանողների 40.8 տոկոսը մեկնել են հարազատներին և ընկերներին այցելության, 25.7 տոկոսը՝ հանգստի և ժամանցի, 14.0 տոկոսը՝ բուժման և 11.4 տոկոսը՝ գործնական նպատակներով:

Աղյուսակ 10. Հարցմանը մասնակցած ժամանողների բաշխվածությունն ըստ նպատակի


Նպատակը	Ժամանողների թվաքանակը, մարդ	Տեսակարար կշիռը, %
Գործնական	31	11.4
Կրթության	12	4.4
Բուժման	38	14.0
Հանգստի և ժամանցի	70	25.7
Մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության	1	0.4
Այցելություն հարազատներին, ընկերներին	111	40.8
Այլ	9	3.3
ԸՆԴՀԱՄԵՆՐ	272	100.0

Ժամանողներից չնչին մաս են կազմում մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության և կրթության նպատակներով մեկնածները, համապատասխանաբար՝ 0.4 և 4.4 տոկոս, իսկ այլ նպատակով ժամանողների կշիռը կազմել է 3.3 տոկոս:

Կապելով ժամանողների աշխարհագրական բաշխվածությունը՝ ճանապարհորդության նպատակների հետ՝ պարզվեց, որ Բուլղարիա և Վրաստան գրեթաշրջիկների մեծ մասը այցելել են հանգստի և ժամանցի, Հայաստան, Ռուսաստան, Ուկրաինա՝ հարազատներին և ընկերներին այցելության նպատակներով: Իսկ Բելգիա և

ԱՄՆ այցելած զբոսաշրջիկները հավասարաչափ բաժանել են հանգստի և ժամանցի ու հարազատներին և ընկերներին այցելության նպատակները 50-ական տոկոս: Թուրքիա և Իսրայել զբոսաշրջիկները մեկնել են գործնական նպատակով:


Գծապատկեր 10. Ժամանողների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ըստ այցելության նպատակի, %



Բուժման նպատակով զբոսաշրջիկները մեկնել են Հայաստան, Ռուսաստան, Կրթության՝ նաև Վրաստան, իսկ մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության նպատակով՝ Լիտվա:

«Ճանապարհորդության հիմնական նպատակները» հարցի արդյունքների ամփոփման ժամանակ տեղեկատվություն է ստացվել նաև սեռատարիքային կառուցվածքի մասին, ըստ որի կրթության, բուժման, հանգստի և ժամանցի ու հարազատներին և ընկերներին այցելության նպատակներով ժամանածների գերակշիռ մեծամասնությունը, համապատասխանաբար՝ 66.7, 36.8, 65.7 և 37.8 տոկոսը կազմել են 18-35 տարիքային խմբի, իսկ գործնական, մարզա-մշակութային միջոցառումներին մասնակցելու և այլ նպատակներով՝ համապատասխանաբար 48.4, 100.0 և 44.4 տոկոսը՝ 36-55 տարեկան տարիքային խմբի ներկայացուցիչները: Ընդ որում 18-35 տարեկան տարիքային խմբում բացի գործնական և բուժման նպատակներով ժամանողներից ամենաշատը կազմում են կանայք, իսկ 36-55 տարեկան տարիքային խմբում գործնական ու հանգստի և ժամանցի նպատակներով ժամանածների կառուցվածքում՝ տղամարդիկ: Վերջինիս տարիքային խմբում հարազատներին և ընկերներին այցելած տղամարդիկ և կանայք հավասարաչափ 20-ական տոկոս են կազմում:

Գծապատկեր 11. Ժամանողների բաշխումն ըստ սեռի և նպատակների, %
Տղամարդիկ Կանայք



Հարցմանը մասնակցած մինչև 17 տարեկանների 44.4 տոկոսը (լրիվությամբ կանանց մասնաբաժինն է) մեկնել են Ղարաբաղից կրթության նպատակով, 44.4 տոկոսը (լրիվությամբ տղամարդկանց մասնաբաժինն է)՝ հանգստի և ժամանցի, 11.2 տոկոսը (լրիվությամբ կանանց մասնաբաժինն է)՝ հարազատներին և ընկերներին այցելության նպատակներով: Ժամանողների 56 տարեկան և բարձր տարիքային խմբի ներկայացուցիչներից 4.0 տոկոսը (լրիվությամբ տղամարդկանց մասնաբաժինն է) մեկնել են գործնական նպատակով, 26.0 տոկոսը(տղամարդկանց 46.2 տոկոսը և 53.8 տոկոսը)՝ բուժման, 10.0 տոկոսը (տղամարդկանց 60.0 տոկոսը և կանանց 40.0 տոկոսը)՝ հանգստի և ժամանցի, 56.0 տոկոսը (տղամարդկանց և կանանց 50.0-ական տոկոսը)՝ հարազատներին և ընկերներին այցելության, 4.0 տոկոսը (տղամարդկանց և կանանց 50.0-ական տոկոսը)՝ այլ նպատակներով:

5.4. Ձբոսաշրջիկների նախընտրությունն ըստ կացարանի տեսակների

Հետազոտության ժամանակ ուսումնասիրվել են նաև զբոսաշրջիկների ճանապարհորդության ընթացքում հանգրվանելու և գիշերելու վայրերը: Ըստ ամփոփված տվյալների, մեկնողների 52.5 տոկոսը ու ժամանողների 74.4 տոկոսը մնացել են բարեկամի կամ ընկերոջ տանը, համապատասխանաբար, 35.4 տոկոսը ու 10.1 տոկոսը՝ հյուրանոցում: Մեկնողների 6.3 տոկոսը հանգրվանել է իր սեփական տանը:

Կան նաև դեպքեր, երբ զբոսաշրջիկը իր ճանապարհորդության ժամանակ գիշերել է տարբեր վայրերում:


Աղյուսակ 11. Ձբոսաշրջիկների ճանապարհորդության տևողությունն ըստ կացարանի տեսակի

Կացարանի տեսակները	Մեկնողների թվաքանակը, մարդ	Ժամանողների թվաքանակը, մարդ	Տեսակարար կշիռը, %		Գիշերած օրերի քանակը		Տեսակարար կշիռը, %	
			Մեկնողների	Ժամանողների	Մեկնողների	Ժամանողների	Մեկնողների	Ժամանողների
Ընդամենը	619	278	100.0	100.0	5603	3961	100.0	100.0
Հյուրանոց	219	28	35.4	10.1	896	206	16.0	5.2
Վարձով բնակարան	27	21	4.4	7.5	121	572	2.2	14.5
Մ/Ն (B&B), պանդոկ ¹	9	6	1.4	2.1	36	76	0.6	1.9
Բարեկամի կամ ընկերոջ տանը	325	207	52.5	74.5	4126	2619	73.6	66.1
Այլ	39	16	6.3	5.8	424	488	7.6	12.3
Մեկ զբոսաշրջիկի հաշվով գիշերած միջին օրերի քանակը	9	14	X	X	X	X	X	X

1) Մ/Ն-մահճակալ և նախաճաշ

Հետազոտությամբ ընդգրկված ԼՂՀ այցելածները հանրապետությունում ընդհանուր առմամբ գիշերել են 5603 օր, իսկ այլ երկրներ այցելածները՝ 3961 օր: Մեկ զբոսաշրջիկը ԼՂՀ-ում գիշերել է միջին հաշվով 9 օր, այլ երկրներում՝ 14 օր:

Գծապատկեր 12. Ձբոսաշրջիկների բաշխումն ըստ հանգրվանելու վայրի, %
Մեկնողներ **Ժամանողներ**




Մեկ զբոսաշրջիկի հաշվով գիշերակացի միջին տևողությունը ըստ կացարանի տեսակի տարբեր է, այսպես, ամենաբարձր ցուցանիշ՝ 12 օր արձանագրվել է ԼՂՀ-ում բարեկամի


կամ հարազատի տանը գիշերաձնների և 27 օր արձանագրվել է այլ երկրներում այլ կացարանում գիշերաձնների, ամենացածրը՝ համապատասխանաբար 4 օր և 7 օր Մ/Ն (B&B), պանդոկում և հյուրանոցում գիշերաձնների մոտ: Բարձր է նաև այլ երկրներում մեկ զբոսաշրջիկի հաշվով գիշերակացի միջին տևողությունը հյուրանոցում՝ 27 օր:

Գործնական նպատակով ԼՂՀ այցելածների 68.8 տոկոսը և այլ երկրներ այցելածների 12.9 տոկոսը հանգրվանել է հյուրանոցում, համապատասխանաբար՝ 21.9 տոկոսը և 71.0 տոկոսը՝ բարեկամի կամ ընկերոջ տանը, հանգստի և ժամանցի նպատակով մեկնածների 52.8 տոկոսը և ժամանածների 19.4 տոկոսը՝ հյուրանոցում, համապատասխանաբար՝ 33.3 տոկոսը և 69.4 տոկոսը՝ բարեկամի կամ ընկերոջ տանը, կրթության նպատակով մեկնածները և մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության նպատակով այցելածները լրիվությամբ մնացել են համապատասխանաբար իրենց բարեկամի կամ ընկերոջ տանը և հյուրանոցում:

